ԽՈՐԵՆԱՑԻԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՉՈՐՐՈՐԴ ԳԻՐՔԸ

ՀՐԱՆՏ Փ. ԱՐՄԵՆ
(Կալիֆորնիա, ԱՄՆ)

1

Խորենացիի մեր ունեցած Պատմության հատորը կվերջանա Գ գրքի 67-րդ գլխով։ 68-րդ գլուխը համբավավոր ողբն է, որ պատմություն չէ այդ բառի իրական առումով, այլ իր անձնական վշտի արտահայտություն։

Երբ կարդանք Գ գրքի 67-րդ գլուխի վերջին տողերը, թեթև հուսախաբություն կունենանք այս եզական Պատմության այնքան անպաճույճ լրանալուն Խորենացին, որ իր գրքի առաջին էջերեն իսկ քեզի կզգացնե, թե ինչ դժվարին, բայց փառավոր գործ մը կկատարե և հաճախ իր անհատական գաղափարները կհայտնե, ահա կվերջացնե առանց իր կողմե ի կատար հանած աննախընթաց գործի մասին կարծիք մը արձանագրելու։ Կարծես հնչեղ համերգ մրն է, որ, լրանալու մոտ, կկորսնցնե իր դաշնաթավալ չափը, և հոգնած, քանի մը պարզուկ խազերով գեղուն երաժշտությունը կվերջանա։

Կարդանք. «Իսկ եպիսկոպոսապետության աթոռը իբրև տեղակալ նրատեց երանելի Մեսրոպի հրամանով նրա աշակերտը, Հովսեփ քահանան, որ Վայոց Ձորից էր, Հողոցիմ գյուղից»[1]։

Խորենացիի դեղագիտական ճաշակին և հռետորական ոճին ծանոթ ըլլալուդ կըսես՝ երկու ենթադրություն կարելի է. կամ Խորենացին հանկարծ հիվանդացավ և ակամա վերջակետ դրավ, և կամ հետագային իր գիրքը խմբագրող մը հաջորդական մեկ կամ ավելի գլուխներ դուրս ձգեց, և գրքի վախճանին դրված Ողբը հոն տեղափոխելով որպես 68-րդ գլուխ՝ վերջացուց։

Խորենացիի հանկարծական հիվանդության մասին բան չենք գիտեր, հոդ չէ թե ինքն իսկ 65-րդ գլուխին մեջ կըսե թե «ծերացած և հիվանդոտ» մարդ մըն է։

Իսկ երկրորդ ենթադրության համար ամուր հող ունինք մեր ոտքերուն տակ և պիտի ջանանք ընթանալ ըստ կարելվույն տրամաբանական քայլերով։

Ժ դարի հայ պատմաբան Թովմա Արծրունիի այլևս բանասերներուն քաջածանոթ տողերը կընտրենք մեզի մեկնակետ։ Սահակ Բագրատունի սպարապետի մասին խոսելուն Թովման կդրե. «Սահակս այս այն Սահակ է, որոյ հրամանավ դրեաց մեծ վարդապետն Մովսէս տիեզերահռչակեալ քերթողն զգիրս պատմութեան Հայոց մեծաց, հրաշազան յօրինուածով, սկսեալ

---

[1] *Մ. Խորենացի, Հայոց պատմություն, Ստ. Մալխասյանցի թարգմ., Կահիրե 1953, գ. 67։*

«Ադամայ մինչ ի կայսր Զենոն, որոյ ժամանակ կենացն տեսեալ ձգեալ ամս հարիւր քսան, լի և պարարտ ծերութեամբ, որպէս գրեալ աւանդեցաւ մեզ այս ի չորրորդ գրուագի խոստաբանեալ պատմութեան Մովսէսի Խորենացւոյ վերադարձութեան ի վերայ երկոցունց գրուագեալ հատուածին, զոր և երանելին Կորիւն ուսումնակից Մովսէսի և աշակերտ սրբոյն Մեսրովպայ յիւրումն ստուգաբանեալ պատմութեան զայսոսիկ մեզ հաւատարմացուցանէ»[1]։

Պետք է նկատի ունենանք, որ վերոհիշյալ հատվածը երկու մասե կբաղկանա։ Առաջին՝ Մովսեսի գրած Պատմությունը «սկսեալ յԱդամայ մինչ ի կայսր Զենոն»։ Երկրորդ մասը Սահակ կաթողիկոսի մասին է, քանզի այժմ ընդունված է, թե որոյ բառով կաթողիկոսը կհասկցվի, և ոչ թե Խորենացին կամ Սահակ իշխանը։

Զենոն կայսր գահ ելավ 474-ին։ Ըստ իս, Չորրորդ գրվագ բսվածը գործ չունի Ադամեն մինչև Զենոն եղած պատմության։ Այդ պատմությունը Խորենացիի Ա, Բ և Գ գրքերուն մեջն է։ Այսինքն Գ գիրքը փոխանակ մեր այժմյան ունեցածով 440 թվականին լմննալու, կվերջանար 470-ական թվականներուն։ Սպա Չորրորդ գրվագով Խորենացին հավելյալ տեղեկություններ կուտար իր ուսուցիչ Սահակ կաթողիկոսի մասին։ Որով Գ գիրքը փոխանակ 67 գլուխներու, ի սկզբան ուներ ավելի գլուխներ, կրնա ըլլալ 80, կամ Բ գրքի պես՝ 92։

Պիտի փորձենք մեր այս ըսածին համար ներկայացնել ապացույց, և տրամաբանական ցուցմունք կամ ենթադրություն։

2

Չորրորդ գրքի գոյության ի նպաստ կամ հակառակ արտահայտվեցան շատ մը բանասերներ։ Էմին, Հ. Կարինյան, Ալիշան, Լանկլուա և այլք ընդունեցին անոր գոյությունը։ Մինչ ուրիշներ՝ մերժեցին։

Վերջին արտահայտվողը, որքան գիտեմ, Ստ. Մալխասյանցն էր։ Խորենացիի իր թարգմանության ներածականին մեջ ան քչիկ մը ջղայնացած կըսե. «Դ գրքի գոյությունը պետք է բացե ի բաց մերժել, քանի որ ուրիշ ոչ մի հեղինակ նրան չի հիշում, ոչ մի հեղինակ նրանից ոչ մի քաղվածք չի անում, այլ բոլորը առաջին երեք գրքից օգտվելուց հետո դիմում են ուրիշ հեղինակների և նրանցից քաղվածքներ անում, քանի որ ոչ մի ձեռագիր, ոչ իսկ գրքերի ցանկերը, չեն պարունակում որևէ հետք այդ գրքի գոյության, իսկ Գ գիրքը իր անունով «Աւարտաբանութիւն մերոյ հայրենեաց» և վերջաբանի Ողբով ապացուցանում են, որ Գ գրքով վերջանում է Հայոց պատմությունը։ Այնպես որ Թ. Արծրունու մի անգամ հիշած Դ գիրքը պետք է համարել կամ թյուրիմացություն կամ աղավաղություն, մանավանդ որ Արծրունին հայտնի է իբրև անհավաստի մատենագրական և պատմական տեղեկություններ հաղորդող հեղինակ»[2]։

Բազմահմուտ ակադեմիկոսը, ինչպես նաև անոնք, որոնք իրեն պես Դ գրքի գոյությունը կմերժեն, առհասարակ կխորհին, թե Դ գիրքը կպարունակեր Մեսրոպի մահեն (440) մինչև Զենոն (474) ժամանակաշրջանի դեպքերը։ Իրենց ուշադրությունեն վրիպած է այն պարագան, թե Թ. Արծրունիի ծանոթ

[1] Թ. Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, Կ. Պոլիս, 1852, էջ 82։
[2] Խորենացի, նույն տեղում, էջ 36։

մեջբերումը չըսեր, թե «յԱդամայ մինչ ի կայսր Զենոն» Չորրորդ դրվագի հետ գործ ուներ։ Երբեք իրենց մտքեն չէ անցած, թե 440-են 474-ի դեպքերը կըրնան մաս կազմած ըլլալ Գ գրքի։

Իսկ երբ Մալխասյանց կըսե, թե «ոչ մի հեղինակ նրան (Դ գիրքը) չի հիշում, ոչ մի հեղինակ նրանից ոչ մի քաղվածք չի անում», միմիայն այն հեղինակներուն ակնարկած կրնա ըլլալ, որ Թ. Արծրունիեն առաջ դրեցին։ Եվ Արծրունիեն առաջ քանի պատմաբան ունինք, որ Խորենացիի գրքի պարունակության մասին նույնիսկ քանի մը տող տեղեկություն կուտա։ Սեբեոսը, Ղևոնդը։ Ոչ մին և ոչ մյուսը։ Չենք կրնար հաշվի առնել Արծրունիեն վերջ եկող պատմաբանները, որովհետև ԺԱ կամ ԺԲ դարուն Խորենացիի գիրքը ենթարկվեցավ խմբագրության, որու արդյունքն է մեր ունեցած հատորը։

Մալխասյանց կհավելու. «Իսկ Գ գիրքը իր անունով — «Աւարտաբանութիւն մերոյ հայրենեաց» և վերջաբանի Ողբով ապացուցանում են, որ Գ գրքով էլ վերջանում է Հայոց պատմությունը»։ Շատ բարի։ Բայց եթե Գ գիրքը փոխանակ 67 գլուխներու ուներ, սեպենք, 80 գլուխ, «Աւարտաբանութիւնը» նույնքան պատշաճ պիտի ըլլար անոր, որքան մեր այժմ ունեցածին։ Ինչո՞ւ և ե՞րբ այդ հավելյալ գլուխները ջնջվեցան։ Այդ մասին կխոսինք քիչ վերջ։

Ապա Մալխասյանց կեղրակացնե. «Այնպես որ Թ. Արծրունու մի անգամ հիշած Դ գիրքը պետք է համարել կամ թյուրիմացություն կամ աղավաղություն, մանավանդ որ Արծրունին հայտնի է իբրև անհավաստի մատենագրական և պատմական տեղեկություններ հաղորդող հեղինակ»։

Թյուրիմացությո՞ւն։ Աղավաղությո՞ւն։ Մի՞թե կարելի է թյուրիմացություն կոչել, երբ Արծրունին Խորենացիի պատմագիրքը ունի իր ձեռքը, կարդացած է դայն ուշի-ուշով։ Եթե Խորենացիի մասին Արծրունին միմիայն մեկ անգամ դրած ըլլար և այդ ալ վերոհիշյալ մեջբերումը, կրնայիր ըսել, թե ուրիշե լսած է և սխալ կտեղեկացնե։ Բայց երբ գիրքը ունի, կարդացած է այդ, ինչպե՞ս կրնա «յԱդամայ մինչ ի կայսր Զենոն» գրելուն մեջ սխալիլ։ Կարելի՞ բան է, որ Արծրունին կարդա տիեզերահռչակյալ քերթողի (ըսել է թե կհիանա ալ հեղինակեն) գիրքը և չգիտնա, թե ուր կվերջանա այդ։ Որքա՞ն բռնաբռոսիկ է Մալխասյանցի բացատրությունը Արծրունիի կողմե Զենոն կայսեր հիշատակության մասին, երբ կգրե. «Իսկ գալով Զենոն կայսրի հիշատակության, իբրև թե Խորենացու պատմությունը հասցրած է եղել մինչև Զենոն կայսրը՝ պետք է ասել, թե Թ. Արծրունին, ժամանակագրական ճիշտ թվեր չունենալով և գիտենալով, որ Խորենացին ապրել է մինչև Զենոն կայսրի տարիները՝ իր կողմից եզրակացրել է, թե մինչև այդ ժամանակ էլ հասցրած պետք է լինի իր պատմությունը»[1]։

Այսպիսի հայտարարություն մը կարելի է ընել միայն այն պարագային, երբ Արծրունին չէ տեսած և չէ կարդացած Խորենացիի գիրքը։

Միթե ե՞ս մնացի բազմավաստակ Մալխասյանցին ըսելու, թե Արծրունին ուներ Խորենացիի գիրքը, կարդացած էր այդ, և քանի անգամներ ալ կհիշե իր գրած պատմության մեջ։ Օրինակ, «և ըստ Մովսեսի քերթողի»[2] «և ըստ Մովսեսի Խորենացվոյ»[3], կամ «և այսօրիկ վայրապար բանք զի լաւագոյնս ևս

---

[1] Խորենացի, նույն տեղում, էջ 37—38։

[2] Արծրունի, նույն տեղում, էջ 2։

[3] Նույն տեղում, էջ 3։

վասն այսորիկ պատմէ մեծ քերթողն Մովսէս»[1]։ Հապա Տրդատի մահվան և հուղարկավորության մասին դրա՞ծ. «Մեծաւ պատուով թագաւորական շքեղ և երևելի դիազարդութեամբ որպէս ընթեռնուք ի բանիբուն գրակարգութեանն Մովսեսի տիեզերահռչակեալ վարդապետի և քերթողի»[2]։

Վերջին մեջբերումն ալ ցույց կուտա, թե Արծրունիի ունեցած Խորենացիի գիրքը մեր ունեցածեն տարբեր է, որովհետև Խորենացիի մեր հատորին մեջ Տրդատի հուղարկավորության մասին բան չկա։

3

Քիչ առաջ ըսի (ենթադրաբար), թե Արծրունիի կարդացած Խորենացիի պատմագիրքը կպարունակեր հավելյալ գլուխներ Գ գրքի, որոնք կուտային հայ աշխարհի պատմությունը Մեսրոպի մահեն մինչև 470-ական թիվերը։ Իսկ ատկե դուրս Չորրորդ հատված մրն ալ, որ Խորենացին կգրեր Սահակ կաթողիկոսի մասին, և կվերջացներ Ողբով։

Այժմ ջանանք մեր այս եզրակացության ընդունելի հիմեր հայթայթել։

Երբ հին պատմագրքի մը պարունակության կամ ընդգրկած ժամանակաշրջանի մասին կասկածներ հայտնվին, ինչպես Խորենացիի պարագային, մեր քննության համար երկու միջոց ունինք։ Առաջին՝ ներքին։ Կուզենք իմանալ, թե արդյոք պատմաբանը իր գրքին մեջ, ուղղակի կամ անուղղակի, կհաղորդե՞, թե ինչ ծրագրով ճամբա ելած է, և թե իր պատմությունը ուսկի՞ց պիտի սկսի և ո՞ւր վերջացնե։ Եթե ան նման հայտարարություն մը ունի, բնականաբար սա կլինի հզորագույն ապացույց։ Երկրորդ՝ արտաքին պարագաներ։ Կուզենք գիտնալ, թե արդյոք ուրիշ մատենագիրներու մեջ կգտնվի՞ հիշատակություն մեզ զբաղեցնող պատմաբանի գրքի մասին։

Բարերախտաբար Խորենացին, բծախնդիր մատենագիր, մեկե՛ ավելի անգամներ Սահակ Բագրատունի իշխանին — և մեզի — կրսե, թե իր պատմության գիրքը ուսկից պիտի սկսի և ուր պիտի վերջանա, եթե ինք ժամանակեն առաջ չմեռնի, քանզի, ինչպես կրսե, «մանավանդ, որ մեր առաջիկա գործն երկար է, իսկ մահկանացուների ժամանակը կարճ և անհայտ»[3]։

Տանք պատմահոր ցուցմունքները, ամենքն ալ Ա գրքի մեջ։

«...Հորինել մեր ազգի պատմությունը, թագավորների և նախարարական ցեղերի և տոհմերի մասին... ամեն մեկի գործերն ու ժամանակները գրով գրոշմել, անկարդ աշտարակի շինությունից սկսած մինչև ներկա ժամանակ...»[4]։

Անկարդ աշտարակի (Բաբելոնի) շինությունից մինչև ներկա ժամանակ, այսինքն՝ իր և Բագրատունի իշխանի ժամանակ։ Անորոշ բան մը կա՞ այս բսվածին մեջ։ Եթե կա, կարդանք ավելի բացորոշը։

Ակնարկելով այս դժվարին ձեռնարկի համար աղբյուրներու չգոյությունը, Խորենացին կգրե. «Այս առիթով այսքան միայն կասեմ. կա՞ արդյոք իմ

[1] Արծրունի, էջ 22։
[2] Նույն տեղում, էջ 63։
[3] Խորենացի, Նույն տեղում, Ա, 3։
[4] Նույն տեղում։

ձեռքի տակ մատյան... կամ քո հայրենական պատմական գրվածքները, որոնց միջոցով Եբրայեցի պատմագիրների նման, վերևից մինչև քեզ իջեցնեմ անսխալ կերպով, կամ թե քեղանից և ուրիշներից սկսելով գեպի վեր տանեմ, գեպի սկիզբը»[1]։

Վերևից մինչև քեզ իջեցնեմ անսխալ կերպով։ Միթե ավելորդ բացատրության կկարոտի՞ ճշտելու հանգրվանը կամ վերջակետը իր դրելիք պատմության — մինչև Սահակ իշխան, որուն պետական գործունեության տարիները կրնանք դնել 460-են 483 թիվը, երբ սպանվեցավ պատերազմի մեջ։

Շարունակենք պրպտել պատմագիրքը.

«Եվ այս հայտնի է ամենքին, թե գժվարագյուտ և տաժանելի է ժամանակագրություն կազմելը սկզբից մինչև մեր ժամանակները...»[2], կամ՝ «Որովհետև եթե աշտարակաշինությունից սկսած մինչև ներկա ժամանակներս պատահած բոլոր բաները ջանանք մեջ բերել մեր պատմության մեջ ի գիտություն քեզ...»[3]։ Եվ Ա գրքի վերջին գլուխին մեջ. «...և այս կերպով քեզ մի անգամից պատմել առաջին մարդուց սկսած մինչև քեզ»[4]։

Այս կրկնությունները — «մինչև քեզ, մինչև ներկա ժամանակները»—տարակույս չեն ձգեր, թե ինք՝ Խորենացին ինչ ծրագիր մշակած էր իր գրքին ընդգրկելիք ժամանակաշրջանի մասին։

Եթե պահ մը բոլորովին անտեսենք Ա գրքի այս բացահայտ ցուցմունքները և միմիայն Արծրունիին բաժը («սկսեալ յԱդամայ մինչ ի կայսր Զենոն») մեր քննության առարկան ըլլար, դարձյալ պիտի փորձեինք լրջորեն նկատի ունենալ այդ, փոխանակ թյուրիմացություն ըսելով մեկդի ձգելու։

Դժվար է հավատալ, թե Խորենացիի պես ջերմ հայրենասեր մը, այնքան վառվռուն հետաքրքրություն ցույց տվող իր ժողովրդի անցուգարձերուն, պիտի պատրեցներ իր պատմությունը 440 թվականին, երբ ստոր կհաջորդեր այնպիսի փոթորկալի երկուտասնյակ տարիներ, որ իր հոգին ցնցած ըլլալու էին։ Կանխարկեմ Վարդանանց պատերազմի նախորդող և հաջորդող խռովահույզ տարիներուն, ուր Հազկերտի և Սիհրներսեհի խստությունները ապստամբության գաղափարին ծնունդ կուտան, ուր այն շարժումը, որ պիտի սկսեր որպես ապստամբություն, կվերածվի քաղաքային (իմա՝ քաղաքացիական—Խմբ.) պատերազմի, ուր երկու հայ խումբեր, գեռ Ավարայրեն ամիսներ առաջ, իրարու դեմ եղբայրասպան կռիվներ կմղեն, և վերջիվերջո երկու հայ բանակներ իրարու կրակին Ավարայրի դաշտին։ Ապա բարքերու ընդհանուր անկումը, հայ իշխաններու աքսորը, հոգևորականներու այլասերումը և այլն, և այլն, որոնց Խորենացին կանդրադառնա իր Ողբի սեղմ, հակիրճ և խտացյալ տողերուն մեջ. «Որովհետև մեզ տիրեցին խստասիրտ և չար թագավորներ, որոնք ծանր, դժվարակիր բեռներ են բարձում, անտանելի հրամաններ են տալիս։ Կառավարիչները կարգ չեն պահպանում, անողորմ են, սիրելիները զավաճանված են, թշնամիները զորացած, հավատը ծախվում է

---

[1] Խորենացի, Ա, 3։
[2] Նույն տեղում, Ա, 5։
[3] Նույն տեղում, Ա, 7։
[4] Նույն տեղում, Ա, 32։

այստեղի ունայն կյանքի համար։ Ասպատակություններ են գալիս անհատնում, շատ տեղերի վրա, տները գերվում են, ստացվածքները հափշտակվում, գլխավոր մարդիկ կապվում են, հայտնի անձեր բանտարկվում են, դեպի ստարություն են արտաքսվում աղնվականները, անթիվ նեղություններ են կրում ռամիկները...»[1]։

Սի՞թե Խորենացին պիտի լռեր և իր օրով տեղի ունեցող այս սասանեցուցիչ ողբերգության պատմությունը դուրս ձգեր։ Դուրս չձգեց, և Արծրունիին ըսածը երկրորդական ապացույց մրն է, քանզի ինչպես տեսանք, ավելի բացահայտ ապացույց մեզի կհայթայթե պատմահայրը իր հատորի Ա գրքին մեջ, կրկին ու կրկին հայտնելով ընելիքը։

Գալով այսպես կոչված Դ գրվածին, որ ըսի թե կպարունակեր Սահակ կաթողիկոսի մասին գրածը, կենթադրեմ թե Դ գրվածք ըսվածի նյութն էր Սահակ կաթողիկոսի մասին Խորենացիի գրի առած մեկ ընդարձակ գովասանական ճառը։ Այս ենթադրություն է, բայց ատոր համար խսկ ցուցմունք, թերևս ապացույց բաոր զորավոր հնչե ընթերցողի ականջին, ունիմ պատմահոր գրքեն։

Խորենացին կարդացող ամեն ուշիմ ընթերցողի ծանոթ է այն պաշտամունքի հասնող խորունկ ու ղդայական նվիրումը, զոր Մովսես ուներ դեպի իր ուսուցիչը՝ Սահակ Պարթև։

Երբ Մեսրոպի մահվան և թաղման մասին Խորենացին երկարորեն հիացիկ տողեր կնվիրե, կակնկալես, որ Սահակի մահվան պարագային Մովսեսի հոետորական տաղանդը թևեր առնե և իր գովասանական ջահերը «կայծակնաճաճանչ» վառե։ Այդ չըներ, բայց Գ գրքի 67-րդ գլխին մեջ կգրե հետևյալը. «Նրա (Սահակի) մասին պետք էր փառավոր ճառ գրել, գրվատել մեր սուրբ հորը, ինչպես նրան արժան է, բայց որպեսզի գլխի երկարությունը ընթերցողին ձանձրույթ չպատճառե, ուրիշ տեղի և ժամանակի կթողնենք այս բանները, այս գրքից դուրս»։

Ուրիշ տեղի և ժամանակի։ Ու այդ խոստումը կատարեց, գրելով այդ «փառավոր ճառը», ընդարձակ, որու մեջ ոչ միայն Սահակի երկարամյա բաղմազան գործունեությունը ներկայացուցած ըլլալու էր, այլ թերևս կգրեր նաև անոր տեսիլի մասին, որ Փարպեցին այնքան երկարորեն կնկարագրե և որ ծանոթ եղած պետք է ըլլար Սահակ-Մեսրոպյան խումբին։ Ողբի մեջ Սահակի մասին Խորենացիի գրած բարախուն տողերը կարդալեր վերջ գիտես, թե աննեբելի ապերախտություն պիտի ըլլար Խորենացիի կողմե խոստացված ճառը չգրել։ Եվ ի՞նչ է Ողբի գլխավոր հատկանիշը եթե ոչ Խորենացիի անմխիթար վիշտը Սահակի մահվան առթիվ։

Ողբը երկար չէ։ Ընդամենը հաշիվ 175 տող, որուն կեսեն ավելին ի մասնավորի Սահակի կորուստին համար իր սրտամորմոք արտահայտությունն է։ Ո՞վ կրնա դիմադրել փորձության՝ գոնե մաս մը արտատպելու անոր արտասվաթոր բառերեն, որպեսզի ավելի որոշ ըլլա, թե ինչո՞ւ Խորենացին իր խոստացած ճառը գրած ըլլալու էր.

«Այսպիսի վշտով խեղդվում եմ, մեր հոր կարոտով մաշվում։ Ո՞ւր է այն քաղցր աչքերի հանդարտությունը ուղիղների համար և ահավորությունը չա-

[1] Խորենացի, նույն տեղում, Գ, 68։

րերի համար, ո՞ւր է այն զվարթ շրթունքների ժպիտը լավ աշակերտներին հանդիպելիս, ո՞ւր է այն բարյացակամ սիրտը, որ արբանյակներ էր գրավում. ո՞ւր է երկայն ճանապարհներ հեշտացնող հույսը, նեղություններից հանգստացնողը.— կորա՞վ ժողովուրդը, ծածկվե՞ց նավահանդիստը. լքե՞ց օդնականը. լռե՞ց խրախուսիչ ձայնը։

«Ո՞վ այսուհետև պիտի հարգե մեր ուսումը, ո՞վ պետք է ուրախանա իր աշակերտի առաջադիմությամբ, ո՞վ հայրական զվարճություն պիտի արտահայտե՝ մասամբ իր որդուցս հազթվելով։ Ո՞վ պետք է զսպե առողջ վարդապետության հակառակ դուրս եկողների հանդգնությունը, որոնք ամեն բանով քանդված ու քայքայված՝ շատ ուսուցիչներ են փոփոխում և բազմաթիվ գրքեր, ամեն բանի նրանք հավասարապես դժվարանում են և իրենց համար չար օրինակ են դարձնում մեղ ծաղրելն ու արհամարհելը, իբրև անհաստատ և որևէ պիտանի արվեստից զուրկ մարդկանց։ Ո՞վ պետք է նրանց սպասանձեցնե սաստելով և մեղ սփոփե գովելով, և չափ դնե խոսքի և լռության» և այլն, և այլն։

Ըստ իս, Թ. Արծրունիի վերոհիշյալ մեջբերումի երկրորդ մասին մեջ հիշված Չորրորդ դրվագը ուրիշ բան չէր, այլ Խորենացիի Սահակի մասին գրած երկար ճառը, որմե առնելով Արծրունին կհիշե Սահակի 120 տարեկան ըլլալը. և Մովսեսի ուսումնակից Կորյունն ալ «զայսոսիկ մեզ հավատարմացուցանե»։

4

Այժմ շատ կարևոր անխուսափելի հարցում մը կդիմադրավե մեզ։ Եթե Խորենացիի պատմության Դ գիրքը մինչև 470-ական թվականները կհասներ, ինչո՞ւ 440 թվականին հաջորդող գլուխները դուրս հանվեցան, և ե՞րբ։

Հին ձեռագիրներու պարունակության մեջ տեղի ունեցած փոփոխության մասին երբ քննարկում ըլլա, առաջին կանոնն է նախ այդ փոփոխության դրդապատճառը ճշտել։ Ի՞նչ պատճառավ փոփոխությունը կատարվեցավ։

Խորենացիի պարագային, այսպես կոչված Դ գրքի գոյության հավատացողներ անհրկեցան տրամաբանական դրդապատճառ մը ցույց տալու պատմագրքեն դուրս ձգված գլուխներու մասին։ Հ. Կարինյանի ենթադրությունը այդ մասին կրնա նմույշ ծառայել անոնց շվարումին։ Ըստ Կարինյանի, «կարելի է թե Չորրորդ դրոց կորստյան պատճառն ևս եղև բոլոր ազգին և մանավանդ հոգևորականաց պակասությունքը աներկյուղ վստահությամբ երեսնեռով տալը»[1]։

Եթե Կարինյանին ըսածը համոզիչ ըլլար, այդ պարագային առաջին դուրս ձգվելիքը Ողբն էր, իր չափազանց հոռի և վարկաբեկիչ պատկերացումովը անպիտան հոգևորականներուն։

Շատ ավելի համոզիչ լուծում մը կարելի է ցույց տալ, որ ոչ միայն համոզիչ, այլ տրամաբանական ալ ըլլա։

---

[1] Հ. Կարինյան, Բաղդատութիւն Պատմութեան Մ. Խորենացվոյ, Տփղիս, 1858, էջ 3։

Խորենացիի պատմագրքեն դուրս ձգված գլուխները կպատկանեին առավելաբար Վարդանանց պատերազմի նախօրյակի և հաջորդող ամիսներու դեպքերուն։ Կըսես՝ մի՞թե այդ պատճառ է, որ դուրս ձգվեին։ Որպես պատասխան այդ հարցման թույլ տվեք, որ նախ եզրակացությունս ըսեմ, ապա բացատրությունս տամ։

Եզրակացություն.— Խորենացիի դուրս ձգված գլուխները կներկայացնեին Վարդանանց պատերազմի պատմությունը՝ դիտված մարզպան Վասակ Սյունիի և անոր գլխավոր գործակից Տիրոց Բագրատունի իշխանի տեսակետեն։

Ստորագծեցի վերևի բառերը, որովհետև ծանրակշիռ հանգամանք ունի ըսածս։ Եղիշեի և Փարպեցիի մոլեգնորեն միակողմանի պատմությունը — Եղիշեի՝ եկեղեցական խումբի չափազանցյալ ջատագովությամբ, և Փարպեցիի՝ Վարդանի գերազանց փառաբանությամբ, և երկուքին դեպի Վասակ Սյունի հրաբորբոք ատելությամբ — այս երկուքին պատմածեն բոլորովին տարբեր պատմություն մը կրլլար Խորենացիի գրածը։ Խորենացին, որ իր ամբողջ պատմության ընթացքին հավաստին փնտրել և գրել իրեն մտասևեռում ըրած է, այս պարագային ալ հավաստի պատմություն մը կուտա, տարբեր Եղիշեեն և Փարպեցիեն։

5

Արդյոք կարելի՞ է Խորենացիի կորսված գլուխներու պարունակած պատմության կմախքը գոնե ներկայացնել։ Այո։ Այդ մեզի համար կարելի կդարձնե նույնինքն Եղիշեի և Փարպեցիի ուշադիր քննությունը։

Նախ տեսնենք, թե այս երկուքը ինչպես կպատմեն ապստամբության կազմակեպումը և գործադրությունը։ Մեր ապշահար զարմանքը շփոթության կփոխվի, երբ կտեսնենք, թե ինչպես Եղիշե և Ղազար իրարու բոլորովին հակառնյա պատմություն ունեն այդ մասին։ Այն աստիճան, որ եթե սեպենք դասախոսական հավաքույթի մը կբանախոսեր Եղիշեն Վարդանանց պատմության նյութի շուրջ, և Փարպեցին ալ ներկաներուն մեջն էր, այս վերջինը պիտի ընդմիջեր բանախոսը և ըսեր. «Ըսածդ իրականության հակառակ է»։ Իսկ եթե բանախոսը Փարպեցին էր՝ Եղիշեն ունկնդիր, տաքարյուն Եղիշեն պիտի պոռար զայրույթով. «Ղազար, ըսածդ սուտ է։ Ամչցիր վրայի սքեմեդ»։

Նախ լսենք Եղիշեն։ Դեռ տասը մեծ նախարարներ Տիզբոնեն չվերադարձած, անոնց ուրացության լուրը Հայաստան կհասնի։ «Այն ժամանակ եպիսկոպոսները ցրվեցին ամեն մեկն իր իշխանությունը, և քորեպիսկոպոսներ ուղարկեցին գյուղերն ու ագարակները և լեռնային գավառների բազմաթիվ ամրոցները։ Դրդեցին, հավաքեցին մեծ բազմությամբ այր և կին, շինական և ազատ, քահանա և միայնակյաց, խրատեցին, ամրապնդեցին և բոլորին Քրիստոսի զինվոր դարձրին։ Եվ իսորհրդի առաջին վճիռն այս հաստատվեց. հարազատ եղբոր ձեռքը թող բարձրանա այն մերձավորի դեմ, որ դուրս է եկել աստուծո պատվիրանի ուխտից, հայրը չինայի որդուն և որդին չակնածի հոր պատվից։ Կինը կռվի իր ամուսնու հետ և ծառան դիմադրի իր տիրոջը։ Աստվածային օրենքը թագավորե ամեն բանում, և նույն օրենքից հանցավորներն ստանան իրենց դատապարտությունն ու պատիժը։ Երբ այս այսպես հաստատվեց և կարգավորվեց, բոլորն էլ զինված դուրս եկան՝ սաղավարտները

գլուխներին, սրերը մեջքերին և վահանները ձեռներին, ոչ միայն քաջ տղամարդիկ, այլև ամուսնացած կանայք»[1]։

Ուրեմն դեռ 450-ի գարնան վերջը, տասը մեծ իշխաններ դեռ Հայաստան չեկած, երկրում արդեն զինված խռովություններ կսկսին և հոգևորականությունը դրդողի դերում հանդես կուգա։

Գրգռված ամբոխներու գործունեությունը ալ ավելի ապերասան և կատաղի բնույթ կստանա։ Կարդանք. «Այն ժամանակ նորից հարձակվեցին այն բերդերի և ավանների վրա, որ երկրի զանազան ամուր տեղերում գրավել էին պարսիկները, կործանեցին, քանդեցին նրանց բնակությունները... (Եղիշեն բազմաթիվ քաղաքներու և ամրոցներու անուններ կուտա)։ Այս բոլորն ամեն մեկն իր գյուղերով ու ագարակներով, զորքերով և զորագլուխներով նույն տարին առան ու կործանեցին և տղամարդկանց ու կանանց դերի տարան իրենց գույքերով ու ստացվածքներով, պատվական գանձերով ու կահ-կարասիով։ Տապալում ու քանդում էին նրանց շենքերը և հրկիզում էին կրակի պաշտոնարկի և պաշտամունքի տեղերը։ Մաքրում էին կռապաշտությունների պղծությունը և դրավում էին ատրուշանների սարք ու կարգը, բերում դնում էին սուրբ եկեղեցում և սուրբ քահանաների միջոցով նվիրում էին ի ծառայություն տերունական սեղանի»[2]։

Ամբոխները իրենց առաջին հաջողություններեն գինովցած, այդքանով ալ գոհ չեն մնար. «...Ռոմվենտև ասանց հայոց զորքերից հրաման ունենալու՝ աշխարհի արևելյան կողմից ոմանք հարձակվեցին Ատրպատական աշխարհի վրա և զանազան տեղերում մեծ վնասներ տվին՝ բազմաթիվ ատրուշաններ առնելով, ավերելով ու կործանելով»[3]։

Վերևի վեց բառերը ստորագծեցի ցույց տալու համար, թե ամբոխը նույնիսկ նախարարներու կամ զորապետներու չէր հնազանդիր և պարսկական հողերը կմտներ։

Փարպեցին սակայն բան չդիտեր այս ահագին և ծավալուն ապստամբական խռովություններու մասին։ Տեսնենք ան ինչպե՞ս կներկայացնե ապըստամբության սկիզբը և զայն հղացողը։ Հետևյալ խտացյալ պատկերը Փարպեցիին է։

Տասը նախարարներ կվերադառնան Տիզբոնեն։ Վարդան իր ընտանիքի անդամները հավաքած ճամբա կիյնա գաղթելու Հունաց աշխարհը։ Ետ կբերվի։ Ոչէ ապստամբական խռովություն չկա։ Գարունը կանցնի։ Ամառվան տաքերուն ամարանոց կերթան Մաղկոտն գավառ։ Ապա Վարդան ժողովի կկանչե եպիսկոպոսներ և իշխաններ՝ մարզպան Վասակեն գաղտնի, և կհայտնե թե, «մինչև ե՞րբ ճշմարտությունը թաքցնենք... հայտնի լույսով երթանք և լուսո որդիներ կոչվինք»։ Հետո Վասակին ալ լուր կուտան, և ավետարանի վրա երդում կըլլա, ու ամենքը միարան են[4]։

Դժվար է նոր պատմարանի մը համար այս երկու իրարու հակառակ վկայություններեն ապստամբության իրավ պատմությունը դրել, եթե ուրիշ ցուցմունք Եղիշեի և Ղազարի մեջ իր դժվարությունը լուծելու չծառայե։

---

[1] Եղիշե, եր. Տեր-Մինասյանի թարգմ., Երևան, 1946, էջ 141—147։

[2] Նույն տեղում, էջ 150—151։

[3] Նույն տեղում, էջ 151։

[4] Փարպեցի, Թիֆլիս, 1908։

Ղազարի և Եղիշեի՝ դեպի Վասակ Սյունի տածած անսանձելի ատելավառ զայրույթը կերևի պահ մը իրենց հիշողությունը մթագնած ըլլալու է, որ Վասակը անպատճառ պատժված տեսնելու մարմաջեն Եղիշեն բոլորովին կմոռանա իր նախապես գրածը ապստամբությունը սկսող եկեղեցական խումբի մասին, Փարպեցին կմոռանա իր գրածը ապստամբությունը սկսող Վարդանի մասին, և բոլորովին տարբեր պատմություն մը կուտան ապստամբության որու կողմե ծրագրված ըլլալը ցույց տալու։ Եվ որովհետև այս մեկ կետի մեջ երկուքն ալ կհամաձայնին, նոր պատմարանը կընդունի երկուքին ալ ըսածը՝ որպես ճշմարտություն։

Ահավասիկ Հաղկերտի ատյանին, ըստ Փարպեցիի, ամբաստանյալները կխնդրեն Արշավիր Կամսարականը, Վարդանի փեսան, որպես իրենց կողմե խոսող։ Արշավիր կպատմե տասը նախարարներու Տիզբոնեն վերադարձը, Վարդանին իր ամբողջ ընտանիքով Հունաց երկիր դաղթելու համար ճամբա ելլելը։ Ապա կպատմե, թե Վասակ մարդ դրկեց Վարդանին, իր կնիքով կնքած երդման Ավետարանով, ու նամակ գրեց Վարդանին այսպես.

«Ինչո՞ւ կփախչիս, և կամ ի՞նչ է եկյուղդ, որմե՞ կը վախնաս, և բան չես հայտներ։ Արդ, մի՛ փախչիր և ոչ ոքե մի վախնար, քանզի եթե Արյաց թագավորեն և անոր ուժեն զարհուրած ես, մի՛ երկնչիր, դարձիր, և նամակ կը գրենք կայսեր և մեր անձերը անոր ծառայության կուտանք՝ խնդությամբ և հոժարությամբ հանձն կառնե, և զորք կուտա մեզի, և անոնք ու մենք միաբանած՝ Արյաց տերը միշտ զբաղ կը պահենք։ Ապա եթե կայսրը տարբեր կը մտածե և իր օգուտը չճանչնա, ես երբ Վրաց մարզպան էի և Աղվանից դուռը իմ ձեռքն էր՝ հոներու բազմաթիվ զորապետներ երդումով և ուխտով ինծի բարեկամացան, և այսօր ալ միևնույն երդումով ինծի հետ կը հարաբերին, և Հայոց աշխարհի ամբողջ հարկը իմ մոտ է, և բոլոր գործակալները իմ ձեռքս և ուրիշ բազում կարասի ես, որ Հայաստան գտնված Պարսիկ գործակալներեն գրավեցի և իմ գանձարանս են։ Եթե անոնցմե մաս մը Հոներուն դրկեմ՝ այնչափ սաստիկ Հոներ հանեմ, որ պարսիկներու հողը չրավե անոնց ավարի։ Եվ նամակը, որ Սյունյաց տերը Վարդանին գրեց, հոս է, և կնիքն ալ մեր մոտ։ Տեսնել հրամայեցեք։ Եվ իր որդիներուն համար ալ այսպես կըսեր, թե՝ «Հայաստան գտնված բոլոր պարսիկները կապանոք ամուր բերդերու մեջ կը բանտարկեմ, մինչև արքան իմ որդիներս ազատ արձակե»[1]։

Ապա Փարպեցին կպատմե Վասակին կայսեր գրած նամակը, դեսպանություն դրկելը, ուրիշ մեծերու դիմելը և այլն, որու մասին Եղիշեն շատ ավելի ընդարձակ կգրե։ Հոս կընդօրինակեմ՝ ցույց տալու հսկայական համեմատությունը Վասակի ծրագրած ապստամբության։

«Որովհետև ցույց տվին այն թղթերը, որ Վասակը և բոլոր նրա հետ եղածները տվել էին, թե նրա հետ միարան են ապստամբության ուխտի մեջ, մի թուղթ Վրաց աշխարհին, և մի թուղթ Աղվանից աշխարհին, նույնպես և Աղձնիք գրած մի թուղթ և մի գրություն Հունաց թագավորին և մի թուղթ էլ Անտիոքոս մեծ սպարապետին։ Այս բոլորի վրա դրված էր Վասակի վավերական մատանին։ Նմանապես նա խոսն էր մոգերի կոտորածին Ջարեհավանում։ Պարսիկներից խլված շատ բերդերի վերաբերմամբ էլ նրա այդ առթիվ

[1] Փարպեցի. նույն տեղում, էջ 180։ Մեջբերումին աշխարհարար թարգմանությունը իմս է։

տված թղթերն ու հրամաններն էին մեջտեղ բերում, որովհետև նա էր այն ժամանակվա մարզպանը։ Ինչպես նաև մի նախարար, որի անունն Ատոմ էր, Գնունյաց ցեղից, և որին նա պատգամավոր էր ուղարկել հույների մոտ, առաջ եկավ և մեղադրեց նրան մեծ ատյանի առաջ հենց այն հրովարտակով, որ նա տվել էր՝ կնքած իր մատանիով... Սկսեցին կարգով ցույց տալ և հայտնել, թե ինչպես նա բարեկամացել էր Հոն Հեռանի հետ Բաղասական թագավորի հետ միաբանած», և այլն, և այլն[1]։

Պետք չեմ տեսներ ավելի մանրամասնելու Եղիշեի և Ղազարի հակասական պատմությունը ապստամբությունը սկսողի մասին։ Կրնանք վստահորեն ասել, թե Խորենացիի դրածը երկուքեն ալ տարբեր եղած ըլլալու էր և ավելի կհիմնվեր Հաղկերտի առջև տեղի ունեցած դատավարության ցուցմունքներուն։

6

Բնավ մոռնալու չենք, որ Խորենացիի մեկենաս Սահակ Բագրատունի իշխանին հայրը, Տիրոց Բագրատունին Վասակ Սյունիի զինակիցն էր այդ մեծ պայքարի մեջ։ Մեկը, որ Վասակի պես կհավատար, թե հույն կայսեր օգնական զորք տալ մերժելեն վերջ, և մանավանդ Հաղկերտի ներման հրովարտակեն հետո՝ այլևս պետք չկար ապստամբության մը, որ դատապարտված էր ձախողելու թշնամիի ուժերու անհամեմատ հզորության պատճառավ։

Խորենացին Վասակ Սյունին և Տիրոց Բագրատունին ձաղկած ըլլալու չէր։ Ընդհակառակը, թերևս անոնց քաղաքականությունն ալ Եղիշեեն և Ղազարեն տարբեր գնահատած։ Բայց համենայն դեպս տված ավելի հավաստի պատմությունը ապստամբության։

Ժ և ԺԱ դարերուն Եղիշեն հրապուրած էր հայ մտավորականները, որոնք կկազմեին ջախջախիչ մեծամասնությունը մտավորական դասուն։ Եկեղեցին Վարդանը սրբացուցած էր, ինչպես նաև Եղիշեն։ Բագրատունի իշխան և թագավոր առհասարակ եղան ջերմեռանդ քրիստոնյաներ, նույնիսկ նահատակվելու աստիճան, և մեկզմեկու հետ մրցումի ելան եկեղեցի և վանք շինելու։ Սույն իշխան և թագավորի աչքին հաճելի չթվեցավ, որ Բագրատունի նախարար մը, Տիրոց Բագրատունի, «դավաճան» Վասակ Սյունիի գործակիցը ըլլա։ Ուստի կենթադրեմ, թե Խորենացիի գիրքը խմբագրության ենթարկվեցավ։ Եվ խմբագրողը, անշուշտ Բագրատունյաց տան երեց կամ եպիսկոպոս, դուրս ձգեց ամբողջ Վարդանանց դրվագը և գոհացավ նոր խմբագրված պատմությունը վերջացնել Սահակի և Մեսրոպի մահով։

Ե՞րբ եղած կրնար ըլլալ այս խմբագրությունը։ Հավանարար Բագրատունյաց հարստության փառքի օրերուն։

Մինչ Ժ դարու սկզբին Թ. Արծրունին Խորենացիի պատմության համար կգրե «Ադամեն մինչև Զենոն կայսր», հետագային, ԺԳ դարուն, Կիրակոս Գանձակեցիին ունեցած Խորենացին մեր ունեցածն է, քանզի գրքի պարունակության մասին կգրե. «...ի նախնի մարդոցն սկսեալ զյոլովից ազանց իրս և զգործս և զարարս բերեալ մինչև ցկատարումն Սահակայ հայոց հայրապե-

[1] Եղիշե, նույն տեղում, էջ 202—203։

տին, և զողբս ասացեալ ի վերայ աշխարհին Հայոց՝ աստանօր դադարեցուցանէ»։

Խորենացին Սահակ Բագրատունիին ըրած խոստումը լիուլի կատարեց՝ Հայ ժողովրդի պատմությունը գրելով «աշտարակաշինութենեն մինչև քեզ, մինչև մեր ժամանակները»։ Եվ անոր գրած այդ ամբողջական պատմության վերջին ընթերցողը, որուն հիշատակությունը կա մեր մատենագիտության մեջ, էր Թովմա Արծրունի։

О ЧЕТВЕРТОЙ КНИГЕ «ИСТОРИИ АРМЕНИИ» МОВСЕСА ХОРЕНАЦИ

ГРАНТ К. АРМЕН (Калифорния, США)

(Резюме)

В статье на основании анализа первоисточников выдвигается новая версия о том, что в период расцвета Багратидской Армении сочинение Мовсеса Хоренаци «История Армении» было подвергнуто сокращению, в результате чего из него был исключен ряд глав Третьей книги, в которых излагались события периода войны против Персии в середине V в. Причиной подобного сокращения явилось то обстоятельство, что армянская традиционная историография и церковь осудили персофильскую политику Васака Сюнеци и его сторонников, и влиятельные лица из рода Багратуни выбросили из книги Хоренаци те главы, в которых положительно описывались осужденные официальной историографией и церковью действия персофилов, в том числе и их предка — князя Тироца Багратуни, отца мецената Мовсеса Хоренаци, князя Саака Багратуни. Последним историком, имевшим под рукой полный текст сочинения Хоренаци, был Фома Арцруни (X в.).